

դափնիներով կարենայ, ինչպէս իրեն ա-  
սել էին համերզի ժամանակ, հայ երե-  
ցողութեան համար լինել նոր ոմն Գուի-  
տո Տ'Արէցոյ, որ Հռովմէական եկեղեցւոյ  
երգեցողութեան հիմանդիր և կանոնաւո-  
րողն համարուած է իրաւամբ:

X.

## ԱԶԳԱՅԻՆ ԱՐՉԱԳԱՆԳ

Ասկան Էֆ. Մարտիկեան

Թուրքիոյ գժբարդութեանց ամենէն կա-  
րեր պատճառներէն մէկն եղած է աղաղա-  
կող պակասը իրական մարդոց, որոնք իրենց  
մէջ միացուցած ըլլային սկզբունքի, կարո-  
ղութեան, և անկեղծութեան յատկութիւն-  
ները:

Ամբողջ այդ երկրին մէջ շատ գժուար է,  
եթէ ոչ անկարելի, այս երեք յատկութիւն-  
ներիվ օժտուած քանի մը մահետականներ  
գտնել, որոնց ի հարգին կրնար վասահաւիլ:

Ահա այդ իսկ պատճառին համար է, որ  
երբ Թուրքիոյ Փրհատնեայ ժողովուրդներէն  
կարող անձ մը կարեռը նախարարական պաշ-  
տօնի մը կոչուի, ու երբ այդ պաշտօնեան  
իրական ծառայութիւններ մատուցան՝ բա-  
րենորդումներ մտցնելով իներկայացուցած  
նախարարութեան մէջ, հրաց մը կր նկատ-  
ուի, ըլլայ բնիկ Թուրքիացիին, ըլլայ Թուր-  
քիան ճանշող օտարականի մը կարմանէ:

Այդ ասուակի նման ցորացող բարենոր-  
դումներէն մէ կը գործադրուեամ 1913-14ին,  
Թուրքիոյ թղթատարական - չեռագրական  
վարչութեան մէջ, չնորչէւ Հայ զաւառա-  
ցիի մը:

Ասկան Էֆ. Մարտիկեան, գրեթէ 45 տա-  
րեկան անձ մը, ասկէ մօտաւրագիս 10 տա-  
րի առաջ կը պաշտօնավարէր Ոսմ. Հանրա-  
յին Պարտուց վարչութեան մէջ, և կը նկա-  
տուէր անոր կարողագոյն պաշտօննեաններէն  
մէ կը: Այդ միջոցին Եւեմտական Կախարա-  
րութիւնը կարող պաշտօնեայի մը սովուն  
րանուած, զիմեց առաջնոյն ինսպրեալ Թուր-  
քիէն գիտաց կարող և վասահէի պաշտօ-  
նայ մը: Ահա թէ ինչպէս Ասկան Էֆ. Հանրի  
նշանակաւեցաւ այդ պաշտօնին: Անու հետեւ,  
իրոք քննիչ նայն նախարարութեան, Թուր-

քիոյ շորս կողմէիր պատեցաւ և գնահատելի  
ծառայութիւն մատոյց:

Ասկէ գրեթէ երեք տարի առաջ, երբ Ե-  
րիտասարդ Թուրքիրը ուղեցին, իրը չնորչ  
չայց, Հայ նախարար մը կարգի Կահէնի-  
նին մէջ, իրենց ամենն անկարեւոր նկատած  
նախարարութիւնը, Թղթատարական և Հե-  
ռազմական, յանձննեցին Հայու մը, Ասկան  
Էֆ. Մարտիկեանի: Ասկան որ Տաճկական  
փորան նկատած լին կէս մը պարախ-խանն  
և կէս մը բացիկն նուաս միսան իրենց աշքը  
բանալ, և Հետզետէ նկատել զայն եւրոպա-  
կան նայնօրինակ հաստատութիւն մը:

Հակայական գործ մըն էր, զոր Ասկան Էֆ.  
Կատարեց կարճ ժամանակի մէջ, անանկ որ  
նոյն խակ Եւրոպական վաճառականներ  
Տուններ սկասան թրական փոսթին յանձննել  
իրենց օտար երկիր զրկած նամակները և  
ծրաբները: Հայ նախարարը, իրը գործի  
մարդ, նախ և առաջ սկսած մրցի Թուրք-  
իոյ, նա մոնաւանդ մայրաքաղաքին մէջ  
հաստատուած Եւրոպական թղթատարա-  
տուններու հետ:

Ասկան Էֆ. Հանճարեղ գաղափարը յղա-  
ցաւ թղթական թղթադրոշմը երկու դաստ-  
կարգի բանենէ՝ արտասահմանի նամակնե-  
րուն համար յատկացուածներու վրայ կար-  
միր ասաց յր աւելցներով:

Ասիկա բնիկին վերջ, կարմիր ասատ մը  
կրող թղթադրոշմերը մեծաբանակ վաճառ-  
ման գրաւ, իւրաքանչիւրը 40 փարայէն քիչ  
մը պակաս գնով: Եւրոպական փօսթ օֆիս-  
ները չին կրնար իրենց թղթադրոշմերուն  
զինը ու և է կերպով զեղչել, ու այսպէս Աս-  
կան Էֆ. յանջեցաւ մրցի անոնց հետ, ո-  
րովհետեւ արտասահման նամակ դրկաց բոլոր  
անձինք, Եւրոպացի թէ Թուրքիացին, սկսան  
կարմիր ասատ կրող թղթադրոշմը գործածել:

Դարձեալ, Ասկան Էֆ. սկսաւ պաշտօնէ-  
ութիւնները մաքրագործել: Ասիկա ջանաց  
թղթատարական պաշտօննեաններու մտքին վր-  
րայ տպաւորել, թէ իրենք ժողովուրդին ծա-  
ռաներն էին, և ոչ թէ տէրերը: Ոչկ քանի  
պաշտօննեաններ դուրս ըրաւ գործէն, և ոչ ոք  
պաշտօնի շարպեց՝ տպանց անոր կարողու-  
թիւնը սառագել:

Թղթատարական - Հեռագրական վարչու-  
թիւն մթնոլորտը բոլորավին փախուեցաւ,  
երբ անոր պաշտօննեանները բարոնեցին, թէ  
իրենց գործ պահերու անհրաժեշտ պահանջը  
բարեկամական կամ քաղաքական ազդեցու-  
թիւն և խարր չիր, այլ անձնական արժեա-  
նիք, բնդունակութիւն, և հաւատարմութիւն:

Ահա, այսպէս, Հայ նախարարին մտցնի-  
սկամ գտապանին ասկ, Թուրքիոյ ծանօթ

ուերկպելիքի, խանիք օճախի թղթատարանոց ները Եւրոպական պաշտոնատաններու փոխակցություն:

Ոսկոն Էֆ. իր բազկաթոռին մէջ նաև լով հրամաններ արձակելու թրափան ստոքութիւնը չունէր, այլ անձամբ կը համազատէր յանցանքներ և թերութիւններ:

Անոր գործունէութիւնը կարելի է նման ցրնել Մր. Քուզվլիթի գործունէութեան, երբ, այս վերջինը նիւ Եսորքի սատիկանապեսութեան պաշտօնը կը կատարէր: Մր. Քուզվլիթ, անսկնկալ կերպով գիշերները կ'երթար, և իրն պաշտօնին մէջ թերացող սոտիկանը իր յանցանքին մէջ կը բռունէր: Նոյնպէս Ռական Էֆ. անձամբ կը կատարէր իր հետազոտութիւնները և կեղծուները երևան կը հանէր:

Որինակի համար, կը պատմուի թէ Հայ Դախարարի իմանալով որ Վասիրի անկիւններէն գիւղի մը մէջ զտնուող հեռագական պաշտօնեան կը թերանար իր պարտավոնութեան մէջ, առաօտ մը կ'այցելէ հռո: Պաշտօնեան բացակայ էր: Քանի մը ժամ կը սպառէ մինչև որ անմիա կը հասնի:

Ասկն Էֆ. առանց որ ով ըլլալը հասկրցնելու, կը սկսի գոնզագատի:

«Հաս կարելոր հեռագիր մը ունէի, զոր պարակի դրկել այս առառու, բայց մինչև հիմա ձեզի սպասեցի:

Պաշտօնեան, զարմանալով այս պարզուկ մարդուն յանդգնութեան վրայ, կը սրամնի և կը սպառայ:

«Էֆէնտիմ, փաթլամատըն ա» Պիր ազ էն օրուն:

Դախարարը թուզթ մը կ'առնէ, և հեռագիրը կ'ուզգէ Հեռագրական Վարչութեան, իմացնելով թէ այդ գիւղի պաշտօնեան արձակաց է, և անոր տեղ ուրիշ մը դրկելու է անմիջակէս: Պաշտօնեան կ'ահարեկի հեռագրին տակ տեսնելով նախարարին ստորագրութիւնը: Անմիջապէս կ'իյնայ անոր սուքերը համբուրելու և ներողութիւն ինդորելու բայց շատ ուշ էր: Իր պաշտօնանկութեան հեռագիրը ինք դրկել կը պարտաւորուի:

Որպէս զի պաշտօնեանները իրենց ապօրինութիւնները սուտագ ժամկել չփորձէին, Ռական Էֆ. օրէնք մը դրաւ, սրուն համաձայն, ամեն ցրուի նամակին ստացուած և դրկուած թուականը դրումնելու էր:

Ոսման Լայրութեան թղթատարական պատութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Ռական Էֆ. Վարչութեան սատեն, սպառեցան և ըլլաբերութեան դրուցան այն գեղեցիկ զանազան թղթադրումները, որոնք ոչ

միայն արուեստուգիտական նրբութիւն ի յայտ կը բերէին, այլ հիներուն նման կէս ժամ յետոյ պահարանի վրայէն չէին իյասր, և խարդախ պաշտօնեաններու շահու աղքիր մը գանձար, Այս նոր թղթադրումները այն շահ լաւ ազգեցութիւն ըրին Եւրոպացւոց վրայ, որ Բարիգեկան կարևոր թերթեր անոնց լւսանկարները արտասպազցին՝ գովեստի տողերով: Բայց մինչդեռ Եւրոպացիներ կը սրանչանային այս թղթադրուշներուն վրայ, Թուրք ազգայնամուն թերթեր սկսան պայքարը մղել Անկան Էֆէնսութիւն գէմ թէ թղթադրումներուն վրայ Հայերէն տառեր կը դառնուէին: Անոնք կը զայրանային նաև թէ ինչու այդ թղթադրումներուն վրայ թուրքերէնէ զատ գրանսերէն ևս գրուած էր:

Վարտիկեան Էֆէնտիմ միշտ առիթներ ստեղծեց փօրպաի գանձը պարարտացնելու համար: Որ մը Էտիրնէի Վերագրաւումը, ուրիշ ատեն մը Պատոյ Առումը պատեհութիւն սեպելով մասնաւոր թղթադրուշներ պատրաստէ տուաւ և վաճառեց: Փղթադրումներ հաւաքորդ բոյոր Եւրոպացիներն ու սեղացիները աշազին քանակութեամբ գնեցին այս բացարկի դրուշներէն:

Հայ նախարարին տնօրինութեան օրով տեղի ունեցան հետևեալ կարելոր բարեկարգութիւնները.

1. Կարելոր գեղջ հեռագրի սակագնին վրայ:

2. Ներսերը հեռագրավ կամ թղթատարով գրամ դրկելու դիւրութիւն.

3. Ամենօրեայ փօրպաի հաղորդակցութիւն գաւառներու հետ.

4. Այսրաքաղաքին մէջ օդումօդիներու հաստատում նամակներու փոխագրութեան համար:

5. Փարսը փօրթով դրկուած ծրաբները ուղարկի հասցէին յանձնումը՝ մաքսային գործողութեան լրացումէն վիրջ:

Անոր ամենավերջին գործը եղաւ Թուրք կին մը պաշտօնի կանչելը: Ասիկա նորանցան բան մըն էր Օսմանեան կայսրութեան մէջ:

Քանի մը օր վերջը, երբ բարեկամ մը Ռական Էֆ. հանդիպեցաւ և շնորհաւորեց զինքը այդ յանդուգն նորութեան համար, անիկա պատասխաննեց ժպտելով:

«Սպասեցէք, Թուրք կնոյմով սկսայ, ինչ որ ամեն գտուարն էր, և Փրիստոնեայ ու Հայեայ կիներով պիտի աւարտեմ Ֆիւթիղիզիք դատը, գէթ իմ պաշտօնական շրջանին մէջ»:

Որովհետև Հայ նախարարը խաղաղութեան մարդն էր, երբ Թուրքիա պատերազմ

հրատարակեց, անիկա հրաժարեցաւ։ Հրաժարականի առթիւ անոր խօսած ձարձ ցույցումն է Մարտիկեան Լիֆլուիի անձնուէր հոգումն։

### ԱՀԱՅԱՍԻԿԻ :

«Լիֆլուուինը ը, այսօր ես ձեր հրաժարեալ նախարարն եմ, այսիկն այլևս ձեր լնկերը չեմ, բայց ձեզմէ բաժնուէլու եաբն ալ սիրով միշտ ձեզի հետ պիտի ըլլասմ։ Շնորհակալ եմ որ պաշտօնավարութեանս ամրող տեղողութեանը կատարեալ պարտաճանաշութիւն և անձնութրութիւն ցոյց տուիք և ձեր նախարար մինակ շնորհացիք իր վերակազմութեան ջանքին մէջ։ Ամենէն մեծ պաշտօնեային մինչեւ ամենէն փոքր պաշտօնեան, մինչեւ անոնք գորս խառնէմ կը կոչէք — և որոնց երրեք ես խառնեմի ստորացուցիչ անոնչը շտուիք, քանի որ անոնք ալ մեզի պէս հայրենիքի ծառայողներ են — իրենց պարտականութեան բարձրութեան վրայ մնացին, և մանաւանդ առ վերջին ամիսներուն, ուր թարգմաներ մասամբ միայն վճարուեցան, շարունակեցին ըստ առաջնոյն իրենց աշխատութիւնք...»

«Իմ նախարարութեան տեղողութեան եթէ երրեք ոմանց դիմ խստօրէն վարուեցայ, ոչ մէկուն անձին հետ գործ շունէի։ Ես նկատի ունեցայ միայն պաշտօն և այդ պաշտօնին պարտադրած պատասխանատրութիւնն էր որ ուղեցի գոցանել ամենուն։ Ամենէն մեծ պաշտօնեաներու հետ ամենէն աւելի խսորէն վարուեցայ. որովհետեւ որչափ պաշտօնը բարձրանայ, պատասխանատրութիւնն ալ այդ համեմատութեամբ կը մեծնայ։»

«Երբ գործի գորսի եկայ, նախ ուղեցի հեռագրական պաշտօնեաներուն վիճակը բարեկալ, որովհետև անոնք, մանաւանդ գաւառական մասներու մէջ, ասիստած են մութ տեղերու մէջ և աւար բայսորու տակ աշխատալ չնին թոշակով։ Ես ասոնց ամսականն վրայ յաւելում ընկել տուիք։ Խսկ ուրիշ կարգ մը պաշտօնեաներու ամսականն իրայ ալ ըլլալիք յաւելումներուն համար հարկ եղած վարկը շտրուեցաւ։ Ուրիշ ծրագիրներ ալ մշակուեցան, որոնց գործադրութեան դրուելն առաջ կը ասիստալիմ մենիլ։»

«Այսօր Զեզմէ բաժնուէլու ատեն կ'ողջունեմ ձեր բորբը, և ձեր միջոցով կ'ողջունեմ մինչեւ հետաւոր նահանգներու մէջ աշխատող բօնիքի բորբ մեծ ու պայտիկ պաշտօնեաները։ Կ'ողջունեմ ձեզի և կը մաղթիմ որ աշխատիք ու յառաջդիմէք և իրեն ձեր աշխատութեան վարձ ստանաք սամ։ Հայրենիքին բարօրութիւնը։»

Կը մոսածեմ ինքիրենս որ Թուրքիոյ գրանիք երկիրը կարելի պիտի ըլլար դրախտամբ իսկանի քանի մը տարիէն, եթէ Ասկան իշխ. Մարտիկեանի նման նախարարներ շատ գտնուէին։

\* \* \*

Ակոչնակ Թիւ 51»

## ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ

ԼԻՎՈԲԽՈՑԻ ՀԱՅՈՅ ԲՈՂԱՔԱԳԻՒՄԻՆ

ԱԽ ԾԻՐԱՆԱԱՌ ՕԲՍԻՆ

Նուիրական է մեզ համար ամէն ինչ որ հութեան մէջն յանկարծ կը ծագի հայ անուամբ դրոշմուած, և նոր լոյս, նոր ճառագայթ մը կը ցոլացնէ ազգային պատմութեան միին ստուկիները փարատելու համար։ Այս անգամ կայծ մ'է որ կը յանէ դիւաններու փոշիներէ և յետ ի Հոռվմայ մինչեւ Աթէնք գաղթելու։ Կու զայ հանգելու այս խաղաղ կղղիկի մէջ որոյ վերե երկու զարերէ ի վեր հայկական շունչն և զոգին կը թևածեն։ Հրաշ պարակա շնորհակալութիւն կը յայանենք առ պատ. Ռւաուցչապես Տօրթ. Սպիրիտին լամբրու, որ զայս ծանոյց մեզ և գեղցիկ լուսատիպ պատկերով մը զիւրացուց մեր հրատարակութիւնը։ Պատառիկս մասն կը կագմէր երրեմն՝ ծիրանաւոր Օրսինիի դիւանական հաւաքածոյին, ուստի և մենք Օրսինի պէտք ենք ուղղել այն իրուսինի ծիրանաւորին անոնը՝ առ որ ուղղուած է թախանձանաց նամակը Կամ բողոքագիրը։

Պարունակութիւնն ամենապարզ է և կարօտ չէ մենութեան, իսկ ինչ որ մեզ համար թանկագին ու կարենոր է, և բոն իսկ զայն ստորագրողին անունը՝ խոհա Սաֆար, որդի խոհա Սուլրանումի։ Այսու մի քայլ աւելի յառաջ կ'երթանց ցեղագրութեանց մէջ, Արգարեանց ցեղագրութեան, որ Ժշ-Ժի գարերու մէջ, թէպէտ դեռ ոչ բոլորովին